ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ ԽՈՐՀՈՒՐԴ

Խորհրդի նախագահ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 օգոստոս, 2022 թվականի N 21-Լ

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ ԽՈՐՀՐԴԻ
ՆԻՍՏ ԳՈՒՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով և հաշվի առնելով Հանրային հեռարձակողի խորհրդի աշխատանքներն առավել արդյունավետ կազմակերպելու անհրաժեշտությունը՝ ո ր ո շ ու մ ե մ.

1. Հանրային հեռարձակողի խորհրդի նախագահի նախաձեռնությամբ 2022 թվականի օգոստոսի 31-ին՝ ժամը 12:00-ին, գումարել Հանրային հեռարձակողի խորհրդի նիստ, Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Ալեք Մանուկյան 5 հասցեում գտնվող իր գործունեության վայրում:

2. Սույն որոշման 1-ին կետով նախատեսված՝ Հանրային հեռարձակողի խորհրդի նիստը գումարել հետևյալ օրակարգով.

1. «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» փակ բաժնետիրական ընկերության լսողական ծրագրերի՝ 2022 թվականի սեպտեմբեր, հոկտեմբեր, նոյեմբեր և դեկտեմբեր ամիսների ընթացքում հեռարձակման համար նախատեսված հաղորդացանցերը հաստատելու մասին հարցը:
2. «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերության տեսալսողական ծրագրերի՝ 2022 թվականի սեպտեմբեր, հոկտեմբեր, նոյեմբեր և դեկտեմբեր ամիսների ընթացքում հեռարձակման համար նախատեսված հաղորդացանցերը հաստատելու մասին հարցը:
3. «Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերության տեսալսողական ծրագրի՝ 2022 թվականի սեպտեմբեր, հոկտեմբեր, նոյեմբեր և դեկտեմբեր ամիսների ընթացքում հեռարձակման համար նախատեսված հաղորդացանցը հաստատելու մասին հարցը:

4. Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի 2017 թվականի օգոստոսի 31-ի N 40-Լ որոշման մեջ փոփոխություններ կատարելու և Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի 2013 թվականի դեկտեմբերի 26-ի № 61-Լ որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին հարցը:
5. Հանրային հեռարձակողի խորհրդի 2021 թվականի դեկտեմբերի 23-ի N 68-Լ որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին հարցը:
6. Հանրային հեռարձակողի խորհրդի 2021 թվականի դեկտեմբերի 24-ի N 75-Լ որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին հարցը:

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Ա. ՇԻՐԻՆՅԱՆ

26 օգոստոս, 2022 թվական
ք. Երևան